

Նախագիծ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝
«ԱՐՑԱԽ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության
բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ
Արձանագրություն N ___/_____/ 2010թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՀԱՇՎԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ



«ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Ստեփանակերտ 2010թ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | |
|--|---|
| Հոդված 1. Հաշվիչ հանձնաժողովի վերաբերյալ դրույթներ | 3 |
| Հոդված 2. Հասկացություններ և սահմանումներ | 3 |
| Հոդված 3. Հաշվիչ հանձնաժողովի գործունեության կանոններ | 3 |
| Հոդված 4. Հաշվիչ հանձնաժողովի գործունեության իրավունքների տարածումը Ընկերության Ռեեստրավարի վրա | 3 |
| Հոդված 5. Հաշվիչ հանձնաժողովի գործառույթները | 4 |
| Հոդված 6. Հաշվիչ հանձնաժողովի և Ընկերության կորպորատիվ քարտուղարի համագործակցությունը | 4 |
| Հոդված 7. Հաշվիչ հանձնաժողովի գործառույթների իրականացումը Արտահերթ ժողովի ժամանակ | 4 |
| Հոդված 8. Հաշվիչ հանձնաժողովի անդամների իրավունքները | 4 |
| Հոդված 9. Հաշվիչ հանձնաժողովի անդամների պարտականությունները | 5 |
| Հոդված 10. Հաշվիչ հանձնաժողովի անդամի պատասխանատվությունը | 5 |
| Հոդված 11. Հաշվիչ հանձնաժողովի նախագահը | 5 |
| Հոդված 12. Հաշվիչ հանձնաժողովի գործունեության ֆինանսավորումը | 6 |
| Հոդված 13. Աշխատանքային տարածքը | 6 |
| Հոդված 14. Բաժնետերերի ժողովում ձայնի իրավունքի իրականացման հետ կապված առաջացած հարցերի պարզաբանում | 6 |
| Հոդված 15. Քվեարկության կարգի պարզաբանում | 6 |
| Հոդված 16. Տեղեկությունների գաղտնիությունը | 6 |
| Հոդված 17. Հաշվիչ հանձնաժողովի փաստաթղթերը | 7 |
| Հոդված 18. Հաշվիչ հանձնաժողովի գործառույթների փոխանցումը Ռեեստրավարին | 7 |

Հոդված 1. Հաշվիչ հանձնաժողովի վերաբերյալ դրույթներ

Սույն կանոնակարգը մշակված է «Բաժնետիրական ընկերությունների մասին» ԼՂՀ օրենքի, այլ նորմատիվ իրավական ակտերի, «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ «Ընկերություն») կանոնադրության պահանջներին համապատասխան և սահմանում են Ընկերության հաշվիչ հանձնաժողովի գործունեության կարգը:

Հոդված 2. Հասկացություններ և սահմանումներ

Սույն կանոնակարգում հասկացություններն օգտագործվում են հետևյալ նշանակությամբ.

- **Տարեկան ժողով՝** Ընկերության կանոնադրությամբ սահմանված ժամկետներում գումարվող Ընկերության բաժնետերերի տարեկան ժողով,
- **Արտահերթ ժողով՝** Տարեկան ժողովից բացի գումարվող ժողովներ,
- **Համատեղ ներկայությամբ բաժնետերերի ժողով՝** Բաժնետերերի ժողովի անցկացման եղանակ, որի դեպքում Բաժնետերերի ժողովի օրակարգի հարցերի քննարկումը և որոշումների ընդունումն իրականացվում է բաժնետերերի համատեղ ներկայությամբ,
- **Հեռակա կարգով քվեարկությամբ բաժնետերերի ժողով՝** Բաժնետերերի ժողովի անցկացման եղանակ, որի դեպքում օրակարգի հարցերի վերաբերյալ որոշումների ընդունումը կատարվում է բաժնետերերի կողմից լրացված (քվեարկած) քվաթերթիկներն Ընկերությանն ուղարկելու (ներկայացնելու) միջոցով,
- **Կորպորատիվ քարտուղար՝** Ընկերության պաշտոնատար անձ, որը պատասխանատու է բաժնետերերի իրավունքների և օրինական շահերի իրականացման ապահովման ընթացակարգերի պահպանման համար,
- **Մասնագիտացված գրանցող/Ռեեստրավար՝** Ընկերության հետ կնքված պայմանագրի հիման վրա Ընկերության բաժնետերմսերի սեփականատերերի ռեեստր վարող անձ կամ նման ծառայություններ մատուցող այլ անձ,
- **Հաշվիչ հանձնաժողով՝** բաժնետերերի ժողովի աշխատանքային մարմին, որի գործառույթներն օրենքով կամ Ընկերության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում իրականացնում է Ռեեստրավարը,

Հոդված 3. Հաշվիչ հանձնաժողովի գործունեության կանոններ

1. Հաշվիչ հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնելիս առաջնորդվում է օրենսդրությամբ, Ընկերության կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով ամրագրված պահանջներով:
2. Եթե բաժնետերերի ժողովի անցկացման հետ կապված և հաշվիչ հանձնաժողովի իրավասությանը պատկանող ինչ-որ հարցեր օրենսդրությամբ, Ընկերության կանոնադրությամբ և ներքին իրավական այլ ակտերով կանոնակարգված չեն, ապա հաշվիչ հանձնաժողովի կողմից դրանք պետք է պարզաբանվեն՝ ելնելով բաժնետերերի իրավունքների և օրինական շահերի ապահովման անհրաժեշտությունից:

Հոդված 4. Հաշվիչ հանձնաժողովի գործունեության իրավունքների տարածումը Ընկերության Ռեեստրավարի վրա

1. Եթե հաշվիչ հանձնաժողովի գործառույթներն իրականացվում են Ռեեստրավարի կողմից, ապա նրա վրա տարածվում են սույն կանոնակարգով նախատեսված պահանջները:

Հոդված 5. Հաշվիչ հանձնաժողովի գործառույթները

1. Հաշվիչ հանձնաժողովի հիմնական խնդիրներն են՝
 - բաժնետերերին՝ բաժնետերերի ժողովին մասնակցելու հավասար պայմանների ապահովում,
 - բաժնետերերի ժողովի օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ որոշումների կայացման ընթացքում ժողովի մասնակիցների կամքի արտահայտման արժանահավատ ձևակերպում:
2. Հաշվիչ հանձնաժողովն իրականացնում է հետևյալ գործառույթները՝
 - Համատեղ ներկայությամբ բաժնետերերի ժողովի մասնակիցների լիազորությունների ստուգում և գրանցում, համապատասխան գրանցամատյանների վարում և անձանագրության կազմում,
 - բաժնետերերի ժողովի և օրակարգի յուրաքանչյուր հարցի քվորման որոշումը,
 - բաժնետերերի ժողովում բաժնետերերի (նրանց ներկայացուցիչների) ձայնի իրավունքի իրականացման (այդ թվում՝ քվեարկության կարգի) հետ կապված առաջացած հարցերի պարզաբանում,
 - ապահովում է քվեարկության սահմանված կարգը և քվեարկությանը մասնակցելու բաժնետերերի իրավունքները,
 - իրականացնում է ձայների հաշվարկը և ամփոփում քվեարկության արդյունքները,
 - կազմում և ստորագրում է քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունը,
 - Ընկերության Կորպորատիվ քարտուղարին է հանձնում է քվեաթերթիկները և բաժնետերերի ժողովին մասնակցած բաժնետերերի ներկայացուցիչների լիազորությունները հաստատող փաստաթղթերը,
 - իրականացնում է Ընկերության կանոնադրությամբ և ներքին փաստաթղթերով սահմանված այլ գործառույթներ:

Հոդված 6. Հաշվիչ հանձնաժողովի և Ընկերության կորպորատիվ քարտուղարի համագործակցությունը

1. Հաշվիչ հանձնաժողովը բաժնետերերի ժողովի նախապատրաստման և անցկացման ընթացքում աջակցում է Ընկերության Կորպորատիվ քարտուղարին նրա գործառույթների իրականացման շրջանակում:
2. Ընկերության Կորպորատիվ քարտուղարն իրավունք ունի ներկա գտնվելու հաշվիչ հանձնաժողովի կողմից անցկացվող բաժնետերերի ժողովի օրակարգի հարցերի քվեարկության արդյունքների ամփոփմանը:

Հոդված 7. Հաշվիչ հանձնաժողովի գործառույթների իրականացումը Արտահերթ ժողովի ժամանակ

1. Հաշվիչ հանձնաժողովը պարտավոր է իրականացնել իր գործառույթներն անկախ նրանից, թե ում որոշմամբ է գումարվում Արտահերթ ժողովը:

Հոդված 8. Հաշվիչ հանձնաժողովի անդամների իրավունքները

1. Հաշվիչ հանձնաժողովի անդամն իրավունք ունի՝
 - պահանջել Ընկերության պաշտոնատար անձանցից և աշխատակիցներից ներկայացնել տեղեկություններ (նյութեր), որոնք անհրաժեշտ են իր գործառույթների ժամանակին և պատշաճ կերպով կատարելու համար,
 - ծանոթանալ հաշվիչ հանձնաժողովի փաստաթղթերին,
 - մասնակցել հաշվիչ հանձնաժողովի փաստաթղթերի պատրաստմանը:

Հոդված 9. Հաշվիչ հանձնաժողովի անդամների պարտականությունները

1. Հաշվիչ հանձնաժողովի անդամը պարտավոր է.
 - գործել իր իրավունքների սահմաններում՝ հաշվիչ հանձնաժողովի առջև դրված խնդիրներին և գործառույթներին համապատասխան,
 - գործել ողջամտորեն, բարեխղճորեն, բաժնետերերի իրավունքների և շահերի ապահովման առնչությամբ ցուցաբերել պատշաճ հետևողականություն,
 - չբացահայտել իրեն հայտնի դարձած գաղտնի տեղեկությունները,
 - ընդունել հիմնավորված որոշումներ, այդ նպատակով ուսումնասիրել անհրաժեշտ բոլոր տեղեկությունները (նյութերը) և հաշվիչ հանձնաժողովի նախագահին և/կամ անդամներին փոխանցել բոլոր տեղեկությունները, որոնք վերաբերում են հաշվիչ հանձնաժողովի գործառույթների իրականացմանը,
 - տեղեկացնել հաշվիչ հանձնաժողովի նախագահին և/կամ անդամներին բաժնետերերի իրավունքների և շահերի առնչությամբ իրեն հայտնի դարձած օրենսդրության, Ընկերության կանոնադրության և ներքին իրավական ակտերի պահանջների խախտման փաստի մասին,
 - մասնակցել բաժնետերերի ժողովին և պատասխանել ժողովի մասնակիցների հարցերին:

Հոդված 10. Հաշվիչ հանձնաժողովի անդամի պատասխանատվությունը

1. Ընկերությունն ի դեմս Գլխավոր տնօրենի իրավունք ունի պայմանագիր կնքել հաշվիչ հանձնաժողովի անդամների հետ, որը պետք է պայման ներառի բաժնետերերի քվեարկության մասին իրեն հայտնի դարձած գաղտնի տեղեկությունների (բացառությամբ այն դեպքերի, երբ դրա վերաբերյալ տեղեկությունները պետք է ներկայացվեն օրենքի հիման վրա) բացահայտման դեպքում պատասխանատվության մասին:
2. Հաշվիչ հանձնաժողովի անդամները պատասխանատվություն են կրում Ընկերության առջև իրենց գործողությունների (անգործության) հետևանքով Ընկերությանը պատճառած վնասի համար՝ Ընկերության և հաշվիչ հանձնաժողովի անդամի հետ կնքված պայմանագրով նախատեսված կարգով և պայմաններով:

Հոդված 11. Հաշվիչ հանձնաժողովի նախագահը

1. Հաշվիչ հանձնաժողովի նախագահը ընտրվում է բաժնետերերի ժողովի որոշմամբ:
Ռեեստրավարի կողմից հաշվիչ հանձնաժողովի գործառույթների իրականացման դեպքում, Ռեեստրավարը նշանակում է հաշվիչ հանձնաժողովի նախագահի պարտականություններ կատարող անձին:
2. Հաշվիչ հանձնաժողովի նախագահի նրա բացակայության դեպքում նրա գործառույթներն իրականացնում է հաշվիչ հանձնաժողովի անդամներից ամենատարեցը:
3. Հաշվիչ հանձնաժողովի նախագահը.
 - կազմակերպում է հաշվիչ հանձնաժողովի աշխատանքները,
 - ներկայացնում է հաշվիչ հանձնաժողովը բաժնետերերի, Ընկերության մարմինների և պաշտոնատար անձանց առջև,
 - իրականացնում է սույն կանոնակարգով նախատեսված այլ գործառույթներ:
Հաշվիչ հանձնաժողովի նախագահին իրավունք չունի իր գործառույթների իրականացումը հանձնարարել այլ անձի:

Հոդված 12. Հաշվիչ հանձնաժողովի գործունեության ֆինանսավորումը

1. Բաժնետերերի ժողովի անցկացման դեպքում հաշվիչ հանձնաժողովի գործունեության հետ կապված ծախսերը կատարվում են Ընկերության բյուջեից հատկացված միջոցների հաշվին:
2. Միջոցները բաշխվում են Ընկերության Գլխավոր տնօրենի կարգադրության հիման վրա և հաշվիչ հանձնաժողովի նախագահի գրավոր հիմնավորմամբ:
3. Հաշվիչ հանձնաժողովի գործառույթների իրականացման հետ կապված ծախսերի մասին հաշվետվությունը կազմվում է հաշվիչ հանձնաժողովի կողմից և Ընկերության Գլխավոր տնօրենին են ներկայացվում բաժնետերերի ժողովի գումարումից ոչ ուշ, քան մեկ ամսվա ընթացքում:
4. Հաշվիչ հանձնաժողովի գործառույթների իրականացման համար միջոցների ծախսերի մասին հաշվետվությունը կարող է ներառվել Ընկերության տարեկան հաշվետվության մեջ:
5. Ընկերությունը՝ Ընկերության բաժնետերերի ժողովի որոշմամբ կարող է հաշվիչ հանձնաժողովի անդամներին վճարել պարզևավար կամ փոխահտուցել նրանց գործունեության հետ կապված ծախսերը: Պարզևավարի կամ ծախսերի փոխահտուցման չափերը, դրանց վճարման կարգը սահմանվում է Ընկերության բաժնետերերի ժողովի կողմից՝ տնօրենների խորհրդի եզրակացության հիման վրա:

Հոդված 13. Աշխատանքային տարածքը

1. Հաշվիչ հանձնաժողովի աշխատանքների իրականացման համար Ընկերության Գլխավոր տնօրենի կողմից տրամադրվում է աշխատանքային տարածքը:
2. Հաշվիչ հանձնաժողովի աշխատանքների համար աշխատանքային տարածքը պետք է ապահովված լինի ամբողջական լուսավորվածությամբ, գրասենյակային գույքով և այլ անհրաժեշտ պարագաներով:

Հոդված 14. Բաժնետերերի ժողովում ձայնի իրավունքի իրականացման հետ կապված առաջացած հարցերի պարզաբանում

1. Բաժնետերերի ժողովում բաժնետերերի (նրանց ներկայացուցիչների) ձայնի իրավունքի իրականացման հետ կապված առաջացած հարցերը (բանավոր կամ գրավոր) կարող են ուղղվել հաշվիչ հանձնաժողովի ցանկացած անդամի:
Բաժնետերերի (նրանց ներկայացուցիչների) տրված հարցերին պատասխանում է հաշվիչ հանձնաժողովի ցանկացած անդամներից մեկը՝ հաշվիչ հանձնաժողովի նախագահի հայեցողությամբ:

Հոդված 15. Քվեարկության կարգի պարզաբանում

1. Համատեղ ներկայությամբ բաժնետերերի ժողովի ընթացքում քվեարկությունից առաջ հաշվիչ հանձնաժողովի անդամներից մեկը հայտարարում է քվեարկության դրված հարցերի քանակը, հիշեցնում է՝ ձայների հաշվարկի ինչպիսի արդյունքների դեպքում է ընդունվում որոշումը և պարզաբանում է քվեաթերթիկների լրացման կարգը:

Հոդված 16. Տեղեկությունների գաղտնիությունը

1. Այն չափով, որքանով դա թույլատրվում է օրենսդրությամբ, քվեարկության արդյունքների ամփոփման ընթացքում (ձայների հաշվարկ և արձանագրության լրացում) հաշվիչ հանձնաժողովի նախագահին և անդամներին հայտնի դարձած տեղեկություններն ու փաստերը համարվում են գաղտնի:

Հոդված 17. Հաշվիչ հանձնաժողովի փաստաթղթերը

1. Հաշվիչ հանձնաժողովի փաստաթղթեր հանդիսանում են բաժնետերերի ժողովի գրանցման մասին արձանագրությունը և բաժնետերերի ժողովի քվեարկության արդյունքների մասին արձանագրությունը, որոնց նկատմամբ պահանջները սահմանվում են Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի մասին կանոնակարգով:
2. Հաշվիչ հանձնաժողովի փաստաթղթերը չեն հաստատվում Ընկերության բաժնետերերի ժողովի կողմից կամ Ընկերության այլ մարմինների կողմից հավանության չեն արժանանում:

Հոդված 18. Հաշվիչ հանձնաժողովի գործառույթների փոխանցումը Ռեեստրավարին

1. Ընկերությունն, ի դեմս Գլխավոր տնօրենի իրավունք ունի պայմանագիր կնքել Ռեեստրավարի հետ, որն իրականացնում է հաշվիչ հանձնաժողովի գործառույթները, եթե բաժնետերերի ժողովի կողմից որոշում է ընդունվել հաշվիչ հանձնաժողովի գործառույթները Ռեեստրավարին փոխանցելու վերաբերյալ: